*<u>ՆԱԽԱԳԻԾ</u>*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «-----------» 2010թ. N ----- Ն

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

*Երևան քաղաքի ավագանին որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ* *Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

# ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի կողմից այս տարի իրականացվող ամենածավալուն ճանապարհաշինական ծրագրերից է Ծիծեռնակաբերդի խճուղու իրականացումը: Ծրագիրը բաղկացած է 2 փուլից, ընդհանուր շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է շուրջ 1,664,000.0 հազ. դրամ, առաջին փուլի արժեքը շուրջ 798,000.0 հազ. դրամ է, 2–րդ փուլինը՝ 866,842.0 հազ. դրամ: Ի սկզբանե 2010 թվականին նախատեսված էր իրականացնել առաջին փուլի աշխատանքները, որոնք սկսվել էին հունիսին և նախատեսվում էր ավարտել հոկտեմբերի վերջին: Հաշվի առնելով ծրագրի կարևորությունը՝ առաջարկվում է որոշման նախագծով հատկացնել 2-րդ փուլի համար անհրաժեշտ 866,842.0 հազ. դրամը՝ 2 ամիս երկարաձգելով շինարարական աշխատանքների ավարտի ժամկետը և 2-րդ փուլի աշխատանքները նույնպես իրականացնել 2010 թվականին: Շինարարական աշխատանքների ամբողջական ավարտից հետո շուրջ 2 կմ երկարությամբ առանց մայթերի նախկին խճուղու փոխարեն կունենանք 4-5 մետր լայնացած, յուրաքանչյուր ուղղությամբ լիարժեք երկշերտ 7 մ լայնությամբ երթևեկելի մասով և ամեն կողմից 1.5 մ լայնությամբ մայթերով նոր խճուղի, որի միջնամասում կլինի տարբեր մակարդակներով տրանսպորտային հանգույց:

Սույն որոշման նախագծով նախատեսվում է նաև Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեում նոր՝ «Դպրոցների նորոգում և հիմնանորոգում» ծրագիր ավելացնել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող դպրոցներում հրատապ լուծում պահանջող վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար: Մասնավորապես, սույն որոշման նախագծով նախատեսվում է ընդհանուր թվով 51,914.0 հազ. դրամ գումար հատկացնել Երևանի թիվ 15, 33 և 68 հանրակրթական դպրոցներում կոյուղու, սանհանգույցների, տանիքի և դահլիճի վերանորոգման աշխատանքներ կատարելու համար: Նշված դպրոցներում նախատեսվող շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերն առկա են:

Որոշման նախագծով նախատեսվում է նաև «Բակային տարածքների բարեկարգում» ծրագրին ավելացնել 10,000.0 հազ. դրամ Աերացիա թաղամասում շենքերի բակային հատվածում մինի ֆուտբոլի դաշտ կառուցելու համար:

Միաժամանակ, վերոգրյալ աշխատանքները նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու միջոցով, մասնավորապես հետևյալ ծրագրերի նվազեցման հաշվին.

1. Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման աշխատանքների համար բյուջեով նախատեսվել է 110,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում կազմակերպվել է գնման գործընթաց և 109,800.0 հազ. դրամ արժողությամբ պայմանագիր է կնքվել, որից 60,000.0 հազ. դրամի աշխատանքները նախատեսված են 2010 թվականին, իսկ 49,800.0 հազ. դրամի չափով՝ 2011 թվականին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն որոշման նախագծով նախատեսվում է տվյալ ծրագրից 50,000.0 հազ. դրամ նվազեցնել՝ այն հետագայում նախատեսելով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի նախագծում:

2. Երևանի քաղաքի 2010 թվականի բյուջեով քաղաքի մի քանի փողոցներում հետիոտնային անցումների կառուցման նպատակով նախատեսվել էին 307,096.1 հազ. դրամի աշխատանքներ, սակայն բյուջեի միջոցներով կառուցվեց մեկ հետիոտնային վերգետնյա անցում Բաբաջանյան փողոցում, ևս մեկը մինչև տարեվերջ նախատեսվում է կառուցել Հալաբյան փողոցում : Խանջյան–Թումանյան փողոցների խաչմերուկում նախատեսված անցումը կառուցվեց ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին, իսկ Բաղրամյան փողոցում նախատեսվածը որոշվեց կառուցել 2011 թվականին՝ հաշվի առնելով քաղաքաշինական ծրագրերի արդյունքում փողոցի ծանրաբեռնվածությունը: Հաշվի առնելով նշվածը՝ նախատեսված գումարներից նախագծով առաջարկվում է նվազեցնել 200,000.0 հազ. դրամ:

3. Երևան քաղաքի բյուջեով տոնական և հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքներ, ինչպես նաև քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրման աշխատանքներ իրականացնելու համար նախատեսվել է 91,000.0 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 30,000.0 հազ. դրամի աշխատանքներ, ինչպես նաև 11,000.0 հազ. դրամ էլ նախատեսվում է մինչև տարեվերջ իրականացնելու համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշման նախագծով առաջարկվում է 50,000.0 հազ. դրամ վերոգրյալ ծրագրից նվազեցնել:

4. Կանաչ տարածքների հիմնում ծրագրով նախատեսվել էր 500,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում կնքվել է 493,400.0 հազ. դրամի պայմանագիր, սակայն, հաշվի առնելով նախագծային փաստաթղթերով նախատեսված տեղանքի փաստացի ուսումնասիրության արդյունքները, նշված ծրագրի իրականացումը Էրեբունի վարչական շրջանում համարվեց ոչ արդյունավետ և պայմանագիրը մասնակի լուծվել է: Հաշվի առնելով, որ նոր տարածքներում ծրագրի նախագծումը և իրականացումը ժամկետի առումով հնարավոր չէ, առաջարկվում է ծրագրից 360,000.0 հազ. դրամը նվազեցնել:

5. Ի սկզբանե բյուջեով նախատեսվել էր 200,000.0 հազ. դրամ քաղաքի փողոցների, բակային և միջբակային տարածքների լուսավորության ցանցի նորոգման (չլուսավորվող տարածքների) համար, սակայն հետագայում հնարավորություն է առաջացել ծրագիրն իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ–ի միջոցների հաշվին, ուստի 2010 թվականի ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով վերաբաշխումներ են իրականացվել, որի արդյունքում ներկայումս նշված ծրագրով նախատեսված միջոցները կազմում են 74,800.0 հազ. դրամ, որից 50,000.0 հազ. դրամը առաջարկվում է նվազեցնել:

6. Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակութային տների և երաժշտական, սպորտի, արվեստի դպրոցների վարչական շենքերը ջեռուցման համակարգերով ապահովելու նպատակով Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեում «Մշակութային տների հիմնանորոգում» և «Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում» ծրագրերով համապատասխանաբար նախատեսվել էր 100,000.0 հազ. դրամ և 150,000.0 հազ. դրամ, սակայն հաշվի առնելով, որ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել «Հայռուսգազարդ» ՓԲԸ–ի հետ՝ 2011 թվականին իր միջոցների հաշվին իրականացնելու արտաքին գազամատակարարման աշխատանքները, ինչն էապես կնվազեցնի բյուջեի ծախսը, առաջարկվում է նշված ծրագրերից 198,756.0 հազ. դրամը նվազեցնել՝ նախատեսելով այն Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում:

7. Կենդանաբանական այգու հիմնանորոգման աշխատանքների համար բյուջեով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ առկա նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, սակայն իրականացվելիք աշխատանքների բնույթից

ելնելով՝ նախագծային ճշգրտումներ են իրականացվում նախագծանախահաշվային փաստաթղթերում, որի արդյունքում համապատասխան միջոցներ կնախատեսվեն 2011 թվականի բյուջեում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ տարվա ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով վերաբաշխումներ են իրականացվել տվյալ ծրագրով նախատեսված միջոցների հաշվին և ներկայումս ծրագրով առկա միջոցները կազմում են 23,254.8 հազ. դրամ, որից էլ սույն որոշման նախագծով առաջարկվում է նվազեցնել 20,000.0 հազ. դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

*ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ* *Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

*Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

Հավելված **N 1**
Երևանի քաղաքի ավագանու
**2010** թվականի -------- -----ի
**N ----** – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | - | - | - |
| 2100 | **01** | **0** | **0** | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **(50,000.0)** | **-** | **(50,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2150 | **01** | **5** | **0** | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ* | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից՝ | | | |
| 2151 | 01 | 5 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **616,842.0** | **-** | **616,842.0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | *Տրանսպորտ* | **666,842.0** | - | **666,842.0** |
| | | | | որից՝ | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 666,842.0 | - | 666,842.0 |
| 2490 | **04** | **9** | **0** | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից՝ | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2500 | **05** | **0** | **0** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **(360,000.0)** | **-** | **(360,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2560 | **05** | **6** | **0** | *Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | **(360,000.0)** | - | **(360,000.0)** |
| | | | | որից՝ | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | (360,000.0) | - | (360,000.0) |
| 2600 | **06** | **0** | **0** | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | **(40,000.0)** | **-** | **(40,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2640 | **06** | **4** | **0** | *Փողոցների լուսավորում* | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից՝ | | | |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2660 | **06** | **6** | **0** | *Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | **10,000.0** | - | **10,000.0** |
| | | | | որից՝ | | | |
| 2661 | 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 10,000.0 | - | 10,000.0 |
| 2800 | **08** | **0** | **0** | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | **(100,000.0)** | - | **(100,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2820 | **08** | **2** | **0** | *Մշակութային ծառայություններ* | **(100,000.0)** | - | **(100,000.0)** |
| | | | | որից՝ | | | |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2823 | 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | (80,000.0) | - | (80,000.0) |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | (20,000.0) | - | (20,000.0) |
| 2900 | **09** | **0** | **0** | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | **(66,842.0)** | **-** | **(66,842.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2950 | **09** | **5** | **0** | *Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն* | **(118,756.0)** | **-** | **(118,756.0)** |
| | | | | որից՝ | | | |
| 2951 | 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | (118,756.0) | - | (118,756.0) |
| 2960 | **09** | **6** | **0** | *Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ* | **51,914.0** | **-** | **51,914.0** |
| | | | | որից՝ | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 51,914.0 | - | 51,914.0 |

Հավելված N 2
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի --------------ի
N ----- – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | - | - | - |
| | այդ թվում՝ | | | | |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | x | - | - | - |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | **1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | x | **50,000.0** | - | **50,000.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | x | 100,000.0 | - | 100,000.0 |
| | որից՝ | | | | |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | **5112** | (560,000.0) | - | (560,000.0) |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | **5113** | 660,000.0 | - | 660,000.0 |
| 5130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ* | x | (50,000.0) | - | (50,000.0) |
| | որից՝ | | | | |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | **5134** | (50,000.0) | - | (50,000.0) |
| 5200 | *1.2 ՊԱՇԱՐՆԵՐ* | x | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5221 | - Նյութեր և պարագաներ | **5221** | (50,000.0) | | (50,000.0) |

Հավելված N 3
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ------------ի
N ------ – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | - | - | - |
| 2100 | **01** | **0** | **0** | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **(50,000.0)** | **-** | **(50,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2150 | **01** | **5** | **0** | ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*** | | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից՝ | | | | |
| 2151 | 01 | 5 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | | (50,000.0) | - | (50,000.0) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***2. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում*** | | ***(50,000.0)*** | - | ***(50,000.0)*** |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **616,842.0** | **-** | **616,842.0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | | **666,842.0** | - | **666,842.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | 666,842.0 | - | 666,842.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***6. Հետիոտն անցումների կառուցում*** | | ***(200,000.0)*** | - | ***(200,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | (200,000.0) | - | (200,000.0) |
| | | | | ***11. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում*** | | ***866,842.0*** | - | ***866,842.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 866,842.0 | - | 866,842.0 |
| 2490 | **04** | **9** | **0** | ***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)*** | | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից՝ | | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | (50,000.0) | - | (50,000.0) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***1. Դրոշների տեղադրում*** | | ***(50,000.0)*** | - | ***(50,000.0)*** |
| | | | | -Նյութեր և պարագաներ | 5221 | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2500 | **05** | **0** | **0** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | **(360,000.0)** | **-** | **(360,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2560 | **05** | **6** | **0** | ***Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)*** | | **(360,000.0)** | - | **(360,000.0)** |
| | | | | որից՝ | | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | (360,000.0) | - | (360,000.0) |
| | | | | այդ թվում՝ | | | | |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ***5. Կանաչ տարածքների (տնկարկների) հիմնում*** | | ***(360,000.0)*** | - | ***(360,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | (360,000.0) | - | (360,000.0) |
| 2600 | **06** | **0** | **0** | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | **(40,000.0)** | **-** | **(40,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2640 | **06** | **4** | **0** | *Փողոցների լուսավորում* | | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից՝ | | | | |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | (50,000.0) | - | (50,000.0) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***1. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում*** | | ***(50,000.0)*** | - | ***(50,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2660 | **06** | **6** | **0** | *Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | | **10,000.0** | - | **10,000.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2661 | 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 10,000.0 | - | 10,000.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***3. Բակային տարածքների բարեկարգում*** | | ***10,000.0*** | - | ***10,000.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 10,000.0 | - | 10,000.0 |
| 2800 | **08** | **0** | **0** | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | | **(100,000.0)** | - | **(100,000.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2820 | **08** | **2** | **0** | *Մշակութային ծառայություններ* | | **(100,000.0)** | - | **(100,000.0)** |
| | | | | որից՝ | | | | |
| 2823 | 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | | (80,000.0) | - | (80,000.0) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***2. Մշակույթի տների հիմնանորոգում*** | | ***(80,000.0)*** | - | ***(80,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (80,000.0) | - | (80,000.0) |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | | (20,000.0) | - | (20,000.0) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***3. Կենդանաբանական այգու հիմնանորոգում*** | | ***(20,000.0)*** | - | ***(20,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (20,000.0) | - | (20,000.0) |
| 2900 | **09** | **0** | **0** | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | **(66,842.0)** | **-** | **(66,842.0)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2950 | **09** | **5** | **0** | *Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն* | | **(118,756.0)** | - | **(118,756.0)** |
| | | | | որից՝ | | | | |
| 2951 | 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | | (118,756.0) | - | (118,756.0) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***4. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում*** | | ***(118,756.0)*** | - | ***(118,756.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (118,756.0) | - | (118,756.0) |
| 2960 | **09** | **6** | **0** | *Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ* | | **51,914.0** | - | **51,914.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | | 51,914.0 | - | 51,914.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *4. Դպրոցների նորոգում և հիմնանորոգում* | | 51,914.0 | - | 51,914.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 51,914.0 | - | 51,914.0 |

Հավելված N 4
Երևանի քաղաքի ավագանու
2010 թվականի ------------------ի
N ----- – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում` (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | - | - | - |
| 2100 | **01** | **0** | **0** | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **(50,000.0)** | **-** | **(50,000.0)** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2150 | **01** | **5** | **0** | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ* | | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից` | | | | |
| 2151 | 01 | 5 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | | (50,000.0) | - | (50,000.0) |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***2. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում*** | | ***(50,000.0)*** | - | ***(50,000.0)*** |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **616,842.0** | **-** | **616,842.0** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | *Տրանսպորտ* | | **666,842.0** | - | **666,842.0** |
| | | | | որից` | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | 666,842.0 | - | 666,842.0 |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***6. Հետիոտն անցումների կառուցում*** | | ***(200,000.0)*** | - | ***(200,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | (200,000.0) | - | (200,000.0) |
| | | | | ***11. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում*** | | ***866,842.0*** | - | ***866,842.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 866,842.0 | - | 866,842.0 |
| 2490 | **04** | **9** | **0** | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից` | | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | (50,000.0) | - | (50,000.0) |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***1. Դրոշների տեղադրում*** | | ***(50,000.0)*** | - | ***(50,000.0)*** |
| | | | | -Նյութեր և պարագաներ | 5221 | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2500 | **05** | **0** | **0** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | **(360,000.0)** | **-** | **(360,000.0)** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2560 | **05** | **6** | **0** | *Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | | **(360,000.0)** | - | **(360,000.0)** |
| | | | | որից` | | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | (360,000.0) | - | (360,000.0) |
| | | | | այդ թվում` | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ***5. Կանաչ տարածքների (տնկարկների) հիմնում*** | | ***(360,000.0)*** | - | ***(360,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | (360,000.0) | - | (360,000.0) |
| 2600 | **06** | **0** | **0** | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | **(40,000.0)** | **-** | **(40,000.0)** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2640 | **06** | **4** | **0** | *Փողոցների լուսավորում* | | **(50,000.0)** | - | **(50,000.0)** |
| | | | | որից` | | | | |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | (50,000.0) | - | (50,000.0) |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***1. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում*** | | ***(50,000.0)*** | - | ***(50,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (50,000.0) | - | (50,000.0) |
| 2660 | **06** | **6** | **0** | *Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | | **10,000.0** | - | **10,000.0** |
| | | | | որից` | | | | |
| 2661 | 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 10,000.0 | - | 10,000.0 |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***3. Բակային տարածքների բարեկարգում*** | | ***10,000.0*** | - | 10,000.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 10,000.0 | - | 10,000.0 |
| 2800 | **08** | **0** | **0** | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | | **(100,000.0)** | **-** | **(100,000.0)** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2820 | **08** | **2** | **0** | *Մշակութային ծառայություններ* | | **(100,000.0)** | - | **(100,000.0)** |
| | | | | որից` | | | | |
| 2823 | 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | | (80,000.0) | - | (80,000.0) |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***2. Մշակույթի տների հիմնանորոգում*** | | ***(80,000.0)*** | - | ***(80,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (80,000.0) | - | (80,000.0) |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | | (20,000.0) | - | (20,000.0) |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***3. Կենդանաբանական այգու հիմնանորոգում*** | | ***(20,000.0)*** | - | ***(20,000.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (20,000.0) | - | (20,000.0) |
| 2900 | **09** | **0** | **0** | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | **(66,842.0)** | **-** | **(66,842.0)** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2950 | **09** | **5** | **0** | *Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն* | | **(118,756.0)** | - | **(118,756.0)** |
| | | | | որից` | | | | |
| 2951 | 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | | (118,756.0) | - | (118,756.0) |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***4. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում*** | | ***(118,756.0)*** | - | ***(118,756.0)*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | (118,756.0) | - | (118,756.0) |
| 2960 | **09** | **6** | **0** | *Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ* | | **51,914.0** | - | **51,914.0** |
| | | | | որից` | | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | | 51,914.0 | - | 51,914.0 |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***4. Դպրոցների նորոգում և հիմնանորոգում*** | | 51,914.0 | - | 51,914.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 51,914.0 | - | 51,914.0 |